

Յ Ո Վ Ս Ե Փ Ա Յ Զ Ե Ր Ք Է Զ Ե Ա Ն Յ Ն Ա Մ Ա Կ

ս ս

Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ն Ա Ջ Ա Ր Ե Ա Ն Յ

(Նարայարութիւն. Տես էջ 42, 53 եւ 100.)

Դուք կամենումէք հաստատել մեր ասածին ընդդէմ, Թէ ձեր բարաբալի օրագիրը չէ պախարակել մեր Հայոց ուսանողներին ներկայացրած Թէատորներ: Բացէք այդ օրագրի 1 ամսատետրակը 1859 թուականի, կարդացէք եր. 74. տող 30. մինչեւ 3 տողը հետեւեալ երեսի. • Ունի կամ տասն հոգի երաժիշտքը, Թէատորական գործողութիւնից յառաջ, • հնչեցուցին մեր ականջին Պօրտիչիւս Համր կամ Ֆենեկիւս • ողբերգութեան գեղեցիկ ներածութիւնը, որ Օրեւ երեսեւ լի երաժշտի գործն է. եւ Յշմարիտն ասեմ, երանի Թէ այդ ներածութիւնից յետոյ, դուք զնացած լինէի դափ • լճից, որովհետեւ վերջին բաները (այսինքն՝ նոյն ինքը • Թատորական խաղարկութիւնը) ոչ եմէ Հարունակցին • այն ազնիւ տպաւորութիւնների կարգը, այլ բոլորովն • տակ ու վերեւ բերեցին իմ հոգին: • Այդ ինչ է, պ. Նազարեանց. գովեստ է, Թէ անհիմն պախարակութիւն. այդ տեղ չկայ ոչինչ ուսումնական քննութիւն, ուր ընթերցողը կարողանար տեսանել Թատորական խաղի պակասութիւնները՝ ապացոյցներով հաստատած, եւ ինքեանք ստուգենտները շնորհակալութեամբ օգուտ քաղէին այն քննութիւնից: Այս տեղ ընթերցողը տեսնումէ միայն քո սովորական վատարանութիւնը առանց ամենայն քննութեան, առանց ապացուցի. որովհետեւ ասումես քո օրագրի միջնորդութեամբ, Թէ այն քաղաքական խաղարկութիւնը տակ ու վերեւ բերեց քո հոգին եւ երանի քե հերածութիւնից յետ դուք զնացած չինէի դափնից: Եմէ դեռ եւս չես հասկանում, Թէ վերեւումը բերած քո խօսքերը անտեղի եւ անարդար վատարանութիւն էր միայն մեր ստուգենտների առաջարկած գեղեցիկ Թէատորին, գոնեա հասկացիր այդ բանը այն պատասխաններից, որով որ ուսանողներից երկուսը՝ պ. Ազգամեանց եւ պ. Ղազանջեանց յայտնեցին իւրեանց իրաւացի անբաւականութիւնը ձաքաղի մէջ ընդդէմ այն անապացոյց եւ անճշունի գրութեանը: Ջարմանալի մարդ եւ, պ. Նազարեանց. ոչ քո գրութեանըն եւ հասկանում, ոչ այլոց պատասխանները. միմէ դոկտորը միշտ այդպէս է լինում. մի Թէ նա այսօր մոռանումէ կամ հերքումէ ինչ որ երկու ասել է. եւ դու որովհետեւ դոկտորի վկայական ունես, վասն որոյ կարող ես չունենալ կամ յիշողութիւն եւ կամ դատողութիւն:

Մեք կարդալով քո Թարգմանած հոգեբանութեան յառաջարանութեան մէջ, եր. ԺԷ, Թէ՝ • Մանկունք Հայոց • ի Ռուսաստանեայս, այն չափափասակք իսկ, *պապանձեալ • կարկիւն* մինչ հասանէ նոցա ի Հայ լեզու արտայայտել • զխորհուրդս ինչ մտաց. • տեսանք այդ բանի մէջ խիստ սաստիկ յանդիմանութիւն Հայոց երեխաներին. որովհետեւ Հայք ամենայն տեղ ցոյց են տամ սէր եւ եւանդի դէպ ի իւրեանց լեզուն. եւ եմէ տեղ տեղ տեսնումմեր պակասութիւն, այն՝ Հայոց ազգի քաղաքական հանգամանքներին է վերածելի եւ ոչ Թէ նոցա կամքին. եւ այդ դիպոսածումը օրինակ էինք բերել քո սեփական զաւակներին, որոց հայերէն չիմանալը դու ինքդ այժմ խոստովանումես, եւ մեր մտքին համաձայն արդարացնումես կեանքի հանգամանքներով, ասելով՝ Թէ քո ընտանիքը գերմանացի են, Թէ քո զաւակները առել են մոնիք եւ դաստիարակութիւն գերմանացի մօրից, եւ յետոյ յաւելցնումես քո սովորական անձնագովութեամբ՝ • Մի այնպիսի հօր մօտ, որ իւր կեանքը նուիրել է ազգի դաստիարակութեանը, • եւ այդ պատճառով չեն ունեցել հնարք հայերէն սովորելու:

Վայ մեր ազգին, որի դաստիարակութիւնը, որպէս ինքդ ասումես, քո ձեռքով պէտք է կատարուի. ընտիր դաստիարակութիւն տուցիր ազգիդ. հրաշալի անդեան կանոններ ընծայեցիր մեզ. նոքա յայտնի են ամենեցուն: Ինչ եւ իցէ, քո զաւակների հայերէն չիմանալը ընդունումես եւ արդարացնումես տնային հանգամանքներով: Տեսար, ինչքան զօրեղ են մարդուս մասնաւոր կեանքի հանգամանքները, եւ որչափ առաւել զօրեղ պէտք է լինին ողջոյն ազգի քաղաքական կեանքի պարագաները: Այդ բանը յառաջագոյն պէտք էր իմացած լինէիր՝ քաջութեամբ դաստիարակիլ *վարդապետ*, եւ ումանց Հայոց զաւակների հայերէն չիմանալը *պապանձեալ* եւ *կարկիլ* չկոչէիր: Եմէ մեք ներողամիտ պէտք է լինենք քո զաւակների հայերէն չիմանալուն, մտածելով քո փոքրիկ տան հանգամանքները, ապա որչափ եւս առաւել պէտք էր ներողամիտ լինէիր ինքդ՝ մտաբերելով ողջոյն ազգի Թէ՝ տնային եւ Թէ քաղաքական պարագաները: Բայց տես, Թէ այդ պատճառները բերելով, կրկին սխալուումես այդ միջոցում, որովհետեւ քո տան հանգամանքները չես կշռել արդար կշռով Հայոց ազգի ընդհանուր կեանքի հանգամանքների հետ: Փոքր տանիքի գերմանացի լինելը, որով արդարացնումես զաւակներից հայերէն չիմանալը, կախեալ էր քո կամքից, իսկ կամքդ՝ քո բնաւորութիւնից, որով սիրաբարութեամբ ամենայն օտարազգի բանի՝ ուսման, հաւատի եւ . . . Թէպէտ եւ ազգասիրութեան դիմակով հետեւումես ծածկել քո ականքն ազգատեցութիւնը, եւ մինքանի հիւանդամիտ մարդիկ խաբուած են քո խօսքերով: Եմէ ամենայն հայ պատկուէր՝ քեզ նման՝ գերմանացի աղջկայ հետ, պէտք էր ունենար նոյն կարծեցած իրաւունքը արդարացնել իւր զաւակների հայերէն չիմանալը. երեւակայեցէ՛ք ձեզ, Թէ այն ժամանակ ո՞ր կմնային Հայոց լեզուն, կրօնը եւ ազգը: Գիտենք, որ դու կասես, գերմանացի կին ունենալը ազգատեցութիւն չէ, Թէպէտ եւ դորանիցն է ծագել՝ քո իսկ սեփական խոստովանութեամբ՝ զաւակներից հայերէն չիմանալը. իսկ մինքանի Հայոց զաւակների առաւել մեծ եւ յարգելի պատճառներով հայերէն չգիտենալը՝ անհողի մեղք եւ ճանաչում, *պապանձեալ* եւ *կարկիլ* եւս կոչում եւ կատարեալ ալլազգութիւն. (Հոգիք. յառաջար. եր. ԺԷ):

Այո, այդպէս եւ, պ. Նազարեանց. երբոր բանը հասնումէ քեզ եւ քո բարեկամներին, այն ժամանակ օտարի հաւատ ընդունելը եւս ալլազգութիւն չէ՝ լինում. այն ժամանակ կասես, • Ազատ է ամենայն մարդ քննողութեան հանդէսումը Թէ կրօնական եւ Թէ գիտնական առարկաների մէջ. . . հայր օտարի հաւատ ընդունելով մնումէ մեզ եղբայր. • (Հիւսիսափ. 10 ամատու): Իրան է, ազատ եւ դու քննողութեան եւ խօսակցութեան հանդէսումը. ազատ եւ դու միայն, մի եւ նոյն բանումը՝ այլոց մեղադրել եւ քեզ արդարացնել. ազատ եւ դու, այսօր այնպէս ասել, վաղը՝ այնպէս. քուցէ քրոնիքով ստացած դոկտորի վկայականը այդ է պահանջում, չգիտենք: Բայց այն խնդրենք մեկնաբանես մեզ, *հրաշափստ վարդապետ*, որ եմէ ազգայնութիւնը երակներումը հոսող արիւնի մէջ է եւ ոչ Թէ կրօնի, որպէս *եւրոպեական յուսի տակ ետամ*, իբրեւ քննող ու զընկող իրաւունքայն տակնովերես անում քո բանականութիւնը 10-րդ ամսատետրակի յաւելումի մէջ, ուրեմն քո զաւակները ինչ ազգի են վերաբերում, եմէ նոցա երակների մէջ հոսումն հայի եւ գերմանացու արիւն. բայց մեկնա-

բաներու ժամանակը այնպիսի անձնասիրութեամբ ու կողմնապահութեամբ փիլիսոփայութիւն չաւնէս, որպէս քո Հիւսիսափայլի միջնորդութեամբ քահանայի խումը պատարագ մատուցանելը եւ 17 տարեկան հայ գիմնազիստի իւր ազգային եկեղեցու մէջ *Ողջոյնի* ժամանակը եւ ձեռք շինանալը մին ողինջ բան համարեցիր. իսկ կրօնաւարացի վերայ բնական յանգանքներ բարդեցիր ու մին քանի Հայոց զաւակների հայերէն փոքր իմացածը *պապանձուել* ու *կարկիշ* կոչեցիր եւ *կատարեալ այրագործիւն*:

Դուք կամեցիք հերքել մեր ասածը, թէ Հիւսիսափայլ օրագիրը խոստացել էր յառաջագոյն ոսկեղէն լերինք, բայց նորա տպագրութեան առաջին օրից մինչեւ ցայսօր տեսանումներ, թէ նորա կէս մասը պարունակումէ թարգմանութիւններ, որ պահանջումեն աշակերտանման սրբագրութիւն, իսկ միւս ու մեծագոյն մասը — հայհոյանք, վատարանութիւն ու գրգռութիւն այս կամ այն անձին, ասումէք իբրեւ պատասխան այդ բանին, թէ մեք կոյր մարդու նման, որ չէ տեսնում աշխարհի արեւը, չենք տեսնում Հիւսիսափայլի լոյսը: Լաւ է լինել կոյր աչօք, քան թէ կոյր մտօք, քննող ու զննող *վարդապետ*. Լաւ է բռնանել արեւգական լոյսը՝ քան թէ չհասկանալ *Հիւսիսափայլ*ի վնասարբ եւ ազգակործան նպատակը: Ամենայն անասուն տեսնումէ արեւու լոյսը, բայց *Հիւսիսափայլ* ասած օրագրի խարդախութիւնը եւ ազգասպան դատաւանդութիւնը չէ կարող տեսնել. որովհետեւ դորա համար հարկաւոր չեն կովի պէս մեծ մեծ աչքեր, այլ ներքին ու մտաւոր տեսութիւն, որից զուրկ են անբան կենդանիները եւ նոցա հետ Սաղան: Վասն որոյ Հիւսիսափայլից շնորհակալ նա պէտք է լինի միայն, ով որ չէ հասկանում ո՞չ քո ուսումնականութեան բարբառ եւ ո՞չ քո գրութեան նպատակը. ով որ չէ կարողանում զանազանել Տշմարիտ լուսաւորութիւնը սուտ լուսաւորութիւնից. ով որ տեսանելով Հիւսիսափայլի «ազգասպան» արեւգական «առաջադիմութիւնը» Նկարած, Սաղայի նման կարծումէ, թէ Հիւսիսափայլը ինքն է աշխարհիս արեւը: Կոյրը նա է, որ տեսնումէ իւր ազգային լեզուն, կրօնը, եկեղեցին հայհոյած դրած Հիւսիսափայլի մէջ, ու շնորհակալ է նորանից: Ասա մեզ, քննող ու զննող քրիստոնեայ, ով է շնորհակալ քո *Չարափայլից*, որպէս միւսեւորութեան ինքզինքը. քանի այդպիսի մտքով կոյր մարդ եւ գտել մեր ուսումնականութեան, բայց եւ ուսումնասէր ու խելացի ազգի մէջ: Ո՞չ ապաքէն մեր ուսումնականները ամենայն կողմից բարձրացնելով իւրեանց ձայնը, հերքումեն ու մերժումեն քո լեզուի նորաշինութիւնը եւ կրօնընդդէմ մտքերը գրով ու խօսքով. եւ դու ինքդ տեսանելով այդ բանը, ասումես՝ «նաեւրը վեր կացան քեզ ընդդէմ». յետոյ այդ քո սեփական խօսքը մոռացած յանելցնումես, թէ «Ամենայն ոք շնորհակալ է Հիւսիսափայլից», եւ այդպիսի հակաձառութեամբ յայտնի ապացուցանումես, թէ դու թշնամի եւ լօգիկային: Լաւ, կարող եւ ցոյց տալ Սաղային, նախանդեանցին եւ այլ մին քանի Դուկասեանի նման եղջերուաբաղ մարդիկ. բայց ոչք եւ նոքա եւ քանիք: Հայոց լեզուն գիտութեամբ եւ անգիտութեամբ խանգարելով, ամենայն ազգային գովելի եւ արժանաւոր բան պատարակելով, մեր անմասն կրօնի համար վերանորոգութիւն քարոզելով, մեր քրիստոսափիմն եկեղեցու մէջ երանութիւնն ուրանալով, Բէկզատի կեանքը նկարագրելով, Կիկերոնի «Տաւրը» աշակերտի նման ծախումուռ թարգմանելով (որ այդ եւս պէտք է հաստատենք) եւ տպագրելով ժամանակակից օրագրութեամբ, ում պէտք էր շնորհակալ կացուցանէիք բաց ի Սաղայից ու նորա նման այլ եւս երկու կամ երեք մարդուց: Բայց գրականական ասպարէզումը մատենագրի արժանաւորութիւնը գնահատումէ միշտ ուսումնականների վէճեր, եւ ոչ թէ ռամիւնների դատողութիւնը, որոց ձայնը շինել եւ քեզ պաշտպան. քո փառքը հիմնումես խաժամուած ամբօխի անընտրող գովեստի վերայ. գերմաներէն Լաւ իմանալով վկայումէ Սաղան, Միւրաբէկեանց կոշկակարի հետ միասին *ա, ծ, ճ, ռ* կարդացած սուպա ռամիկը. երեւ

ի թէ դոկտորական վկայականդ ինքդ եւս փոքր եւս համարում. փառք Աստուծոյ՝ այժմ երկու վկայական ունես, մինը՝ համալսարանական, եւ միւսը՝ Սաղայական: Միթէ կարող է մարդս այդչափ ինքը իւրեան շնանալ, այդչափ ինքը իւրեան գովել, եւ զառանցանքին մէջ երեւակայել, թէ ամենայն ոք շնորհակալ է իւրեանից, երբոր ամենայն կողմից, գրքով ու լեզուով, հերքումեն ու մերժումեն զարիւրանքով նորա գրութեանը՝ թէ ուսումնական եւ թէ կրօնական մասին: Այնքան ինքդ քեզ մոռացել եւ, այնքան ինքդ քեզ հետ անձանօթ եւ, որ մինչեւ արեւու հետ եւ հաւասարում քեզ: Լսել եւ, որ Դանտ, եւ կամ Լոմոնոսով կանոնադրել են եւ պայծառացրել են ժողովրդական լեզուն, իւրաքանչիւր իւր ազգի մէջ, իւրաքանչիւրը մեծամեծ գրութեանով. ինչ լեզուի խորին տեղեկութեամբ, նոր լեզուի յատկութիւնները մանրամասն քննելով, եւ որ առանձն է՝ իւրեանց բնատուր եւ հազուագիւտ ունակութեան ոգով եւ աստուածամէր քանքարով. եւ դու, *Վարդապետ*, նոցա օրինակին կապիկի նման հետեւելով, նոցա ողինջ հոգեկան ձիրքը բռնենալով, ձեռներէց եւ վնաս մեր Հայոց լեզուի նորաշինութեանը. իսկ Սաղան ու Դուկասեանը հոգով սրտով հաւատացած՝ հաստատումեն այդ քո լեզուաշինութիւնը. էլ ինչ է պէտք անելի.

Սրբոր . . . ի,

Դաւալ բատի,

Օլոր նալբաքի.

Հարկաւոր չենք համարում թարգմանել այդ բանը ասիական լեզուագիտութեան դոկտորի համար:

Մեր ասացուածը, թէ «Մեր Տէրը հետեւումէր սրբել այն մեղքը մարդկութեան սրտումը», համարումես սխալական. վասն է՝ վասն զի այդ տեղ խաւարել է Սաղայի արեւը. բայց թող միւսեւորութի Սաղան, այդ խաւարումն շատ մեծ չէ. մին փոքրիկ *սրբել* բառը ընդունել եւ *սուրբ առնել* բառերի տեղ: Այդ պատճառով խորհուրդ է ինք տուել քեզ, ով Սաղաների արեւակն, Լաւ սովորել Հայոց լեզուն, որ ուղիղը սխալ չհամարես, սխալականը՝ ուղիղ: Մեր աշխարհիկ լեզուումը *սրբել* բառը չէ նշանակում ամենեւին *սուրբ առնել*, այլ՝ ջնջել, մաքրել, յատկել: Գրաբառի *սուրբ առնել* բառերը հայերէն իմացողը կեանքագմանէր աշխարհաբառ *սրբացնել* բառով, եւ ոչ թէ *սրբել*, որ գրաբառումը միայն ունի *սուրբ* կամ *նորոգական առնելու* նշանակութիւն. եւ այն տեղ եւս՝ *սրբել*, միայն յետագայ բանից նման դարձնումներումը ունի սուրբ առնելու կամ նուիրելու նշանակութիւն. «Յիշեցես զոր շարաֆունը սրբել զնա» (Նիքի Ի. 8) «Սրբեան դու ինձ զամենայն անդարձիկս նախնին» Եւ. ԺԳ. 2) «Եւ սրբեցես զերբուն ինուէր» (անդ. ԻԺ. 27) «Սրբելով սրբեցի զարծամն տեսուն» (Դատ. ԺԷ. 3) «Եւ զայնտիկ (այսինքն զանօթս ոսկեղէնս եւ արծաթեղէնս) սրբեաց Դաւիթ տեսուն» (Ն. Մնաց. ԺԲ. 11) իսկ *սրբել զմեղս* կարելի է Սանկրիտի մտքով նշանակել *սուրբ առնել զմեղս*. այդ չգիտենք: Բայց հայերէն մտածողի համար՝ *սրբել զմեղս* կնշանակել *ջնջել զմեղս*, որին համեմատութեամբ աշխարհաբառումը *մեղքը սրբել*, այսինքն՝ ջնջել, քառել:

Դուք, պ. Նազարեանց, վիրաւորուել էք մեր ասացուածով թէ ձեր գրութեան մէջ կայ երեսնապատիւ ու տաղուկայի անձնագովութիւն. եւ այդ մեր ցուցմունքը կրօնէք խարբայական ու վատթար գրգռութիւն եւ հայհոյանք: Այդ ձեր վիրաւորութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաստատութիւնն ուսաց առածի Տշմարտութեանը՝ «*Пряжа гласа козлитъ*», Տշմարիտ խօսքը արք է Ժակով: Դուք Տշմարտութիւնը սիրումէք միայն Տշմարտանման խօսքերով, իսկ գործով ատումէք նորան, վիրաւորումէք նորա խրատներով, նորա ցուցմունքը ասիական հոգով հայհոյանք էք կոչում: Ընթերցողը եթէ ունենար այնքան համբերութիւն որ կարողանար կարդալ ձեր ամենայն մեծախօս, ինքնաբաւական, անձնագով գրութեանը, կտեսնէր այնչափ զգուշիկ ինքնագովութիւն, որ ոչ մին հեղինակ, ոչ մին ազգի մէջ, չէ ունեւ

ցել աշխարհիս երեսումը այն ժամանակից՝ երբ գիր ու յետոյ տպագրութիւն հնարուեցան ազգերի մէջ: Գնումներ այս տեղ չուրքերի առաջեւ չուր սեփական խօսքերից մին քանիսը, առանց ցուցանելու գրքերի Թղթահամարները, որովհետեւ ամենեցուն յայտնի են այդ չուր տվորական մեծաբան խօսքերը: «Մեք քննումներ եւրոպեական լուսի տակ... մեր կեանքը նուիրել ենք ազգի դատարարականներ... մեր անձնականը զոյ ենք բերել ընդհանուրի օգտին... մեր բազմաբղիւն, արգասաւոր եւ գովաւրեան արժանի գրութեաները... (կարծումներ, Թէ ընթերցողները ծիծաղում են արդէն...) մեր Յշմարիտ ու առողջ դատողութիւնը... Մեք քննող ու զննող քրիստոնեայ ենք... այսուհետեւ ազատութիւն խաւարի բարիլունեան գերութենից. (այսինքն՝ չուր յայտնուելուց յետ) ... մեծ եւ հոյակապ եւ շնորհալի մարդ է՝ Նազարեանը... 1838 Թուականը նշանաւոր է Հայոց մէջ, որովհետեւ այդ տարի յայտնուեցաւ Հիւսիսափայլը... Հիւսիսափայլից ամենայն ոք շնորհակալ է... եւ այլն, եւ այլն: Այդ ինչ է, պ. Նազարեանը, անձնագովութիւն չէ՞. որպիսի բառերը ապա, որ դարձուածները պէտք է կոչենք անձնագովութիւն: Ինքը ասում եւ Դու կասեանի բերանով, Թէ ստիպուեցանք հեղինակի (այսինքն՝ չուր) բուն ասածները նոյնութեամբ մէջ բերել ընթերցողների ատենի առաջեւ, բայց սոցանից ոչ միւր մէջ չես բերում. խօսքով Յշմարիտ եւ ցոյց տալիս քեզ, իսկ գործով սուտ: Ասւմ մեզ, հոյակապ վարդապետ. վերեւումը բերած տարփողական երգերով վատարանում ես քեզ, Թէ գովում ես. ամօժ է, ամօժ է, պ. Նազարեանը, Յշմարտութեան վերայ այդպէս յայտնի ծիծաղել եւ իզուր հայիցել այն մարդկանց, որ չուր ստախոսութիւնը չուր առաջեւ են դնում. ինչ ուրիշ ապացոյց բերենք չուր անձնագովութեանը, եթէ ոչ չուր սեփական խօսքերը, որ տպագրուած են անշիշտ չուր գրքերի մէջ: Մեզ մտածէ այժմ հասկացնել քեզ, Թէ չուր Թարգմանած հոգեբանութեան յառաջարանութեան մէջ, բաց իբեզ՝ ամենեցուն հասկանալի ձեւով ասում եւ, Թէ Հայոց գրարարութեան լուս. գիտեւ. կարգն չուր խօսքերը. «Իդէպ ելանէր մեզ ցնդել եւ փարատել զտարակոյս կասկածամիտ արանց ումանց, օրք չես եւս գիտեն, Թէ եւ մեր ուսեալ է փոքր ի շատէ պաշտել զժամգոտեան աննորոգելի հնութեամբ լուս. առաջնոց հայկազանց»: Ամենայն մարդ, որ հայերէն կարդացածը հասկանում է եւ չուր մեծախօս, ինքնագով բնաւորութեան հետ ծանօթ է, պէտք է ասէ, Թէ այդ բանով դու ցանկանում ես հաստատել, Թէ Հայոց գրարարութեան շատ լուս. գիտեւ. եւ ոչ Թէ փոքր: Փաստ: Դու չուր հոգեբանութեան Թարգմանութիւնը, ինչպէս ինքը ասում եւ, գրութեւ գրարարութեան լեզուով այն պատճառի, որ կասկածամիտ մարդիկ չկարծեն, Թէ դու այդ լեզուն չգիտես, եւ դու

բանով կամեցել եւ ցնդել եւ փարատել նոցա տարակուսանքը: Հարցանումներ քեզ, քննող ու զննող քրիստոնեայ, ինչով եւ ցանկացել դու ցնդել եւ փարատել կասկածամիտ մարդկանց տարակոյսը. մի՞թէ փոքր իմանալով, որպէս այժմ ասում եւ. մի՞թէ ցանկալով ցոյց տալ կասկածամիտ մարդկանց Հայոց գրարարութեան լեզուն քաջ տեղեակ լինելը, վեր եւ առնում ձեռքդ գրել ու գրում եւ Հայոց գրարարութեան այն նպատակով որ ցոյց տաս կասկածամիտ անձանց չուր փոքր իմանալը. որըրմիւր մարդկային դատողութեանը. կասկածամիտ մարդիկ առանց չուր ասելու գիտէին որ Հայոց գրարարութեան լեզուն որչափ եւ ինչէ գիտեւ. նոցա երկրայութիւնը չուր լուս. իմանալու վերայ էր. եւ դու կամեցել եւ այդ երկրայութիւնը ցնդել եւ փարատել, այսինքն ցոյց տալ չուր քաջ հայկաբան լինելը եւ ոչ Թէ՝ փոքր իմանալը հայերէն, որպէս այժմ մեկնաբանում եւ չուր խօսքը, չուր նպատակին եւ կամքին հակառակ: Կամ Թէ պէտք է ընդունել, Թէ չուր հոգեբանութեան Թարգմանութիւնը գրող լեզուով գրելով, չես կարողացել ցնդել եւ փարատել կասկածամիտ մարդկանց տարակուսանքը, որովհետեւ տպագրութեամբ ցոյց եւ տուել աշխարհին չուր փոքր իմանալը, որպէս նորումս պարզարանում եւ չուր ասածը: Տես ուրեմն, որ փոքր իշտակ բառերը չուր գրած բանի մէջ, ունեն փոխարեքական նշանակութիւն եւ գործ են անում փոխանակ յաւ, յաւ, յաւ, զերազանց բառերի. վեր մի՞ ձեռք, յառաջագոյն հասկացիր եւ ապա խօսիր: Շատ ժամանակ մեր ասումները այլ ինչ, քան Թէ բառերը նշանակում են ըստ երեւութիւն. այդ փոխարեքական ձեռք գորութեամբ իմաստուն բառը՝ գործ ենք անում յիմար՝ բառի տեղ, մտացի բառը՝ փոխանակ տիմարի. շատը՝ փոքրի տեղ, փոքրը՝ շատի եւ այլն: Ո՛չ ապաքէն եւ չուր փոքրի իշտակ բառերը՝ շատի տեղ պէտք է հասկանալ, որովհետեւ կամեցել եւ ցոյց տալ մեր գրող լեզուն լուս. իմանալը եւ ոչ Թէ փոքր իմանալը, որպէս մեկնեցինք վերեւումը: Գուրա ցանց, պ. Նազարեանը, քեզ բան հասկացնելով. Թող հանգստանանք փոքր իշտակ... վարդ կշարունակենք մեր խօսքը. չկարծեւ, Թէ այս տեղ փոքր իշտակ նշանակում է շատ, որպէս չուր բանի մէջ. ոչ, այս տեղ ունի սա իւր սեփական եւ ոչ Թէ փոխարեքական նշանակութիւնը, որպէս եւ Պողոս առաքելոյ բանի մէջ՝ «Փոքր իշտակ մարդարեանաւ», որ միայն հայերէն չիմացողը եւ ճարտասանական ձեռքի հետ անձանց մարդը կկատենք չուր մեծաբան փոքր իշտակ ասածի հետ: Այդպիսի մարդը մեր ասածի մէջ Թէ Սաղան քաջ տրամաբան է, եւ Լամբրոնացու գրութեան մէջ՝ «Ով չուր գորութեանդ, իծայրն հասեր իմաստից», տրամաբան եւ իմաստ բառերը՝ կհասկանայ Տիշը մարդը եւ ոչ Թէ փոխարեքութեամբ ասած:

(Աւարտել յառաջիկայս.)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑԲ. Դ:

Վ Ի Կ Տ Ո Ր Է Մ Մ Ա Ն Ո Ի Է Լ

ԹԱԳԱՒՈՐ ԻՏԱԼԻՈՅ.

Վիկտոր - Էմմանուէլ Բ-ը ժամանակիս ամենէն անուանի Թագաւորներէն մէկն է, որոյ անունը եւրոպիոյ արդի պատմութեանը մէջ պատուաւոր տեղի մը պիտի ունենայ:

Ծնած է նա իթուրին 1820-ին: Հայրը՝ Կարոլոս Ալպերթ լաւ դատարարականութիւն մը տուաւ իրեն: «Թագաւորի մը զաւակը պէտք է այնպէս մեծնայ, կըսէր, ինչպէս հասարակ մարդու մը որդին»: Ուսմանց հետ սովորեցընել տուաւ իրեն նաեւ սուր գործածելու գիտութիւնը, որով այսօրուան օրս Վիկտոր - Էմմանուէլ ամենէն աւելի

լաւ սուր գործածող Թագաւորներէն մէկն է:

1842-ին ամուսնացաւ Աւստրիոյ տնէն Ատելիաիտէ անունով արշիդքսուհեոյն հետ: Ո՛վ արդեօք կը կարծէր այն ժամանակը որ Վիկտոր - Էմմանուէլ օր մը նոյն իսկ իւր Աւստրիացի ազգականացը հետ այժմու անհաշտ Թշնամութիւնը պիտի բանար: Ոչ. Իտալիոյ դժբաղդ տարիները կարելի չէր յուսալ զայն. մանաւանդ Թէ իշխանաց Աւստրիոյ տանը հետ ըրած խնամութիւնները աւելի հաստատել կերեւէին Աւստրիոյ լուծը խեղճ Իտալիոյ վերայ: